

Թեանց տուած հիմանց վրայ՝ ապացուցած է թէ նոյն իսկ բնիկ արամէական կենդանուն-րու մէջ, ինչպէս էին Եմեսա, Պալմիրա, Դամասկոս, կը սկսի մղել ու խուժել արա-րերէն լեզուն եւ ասի «կը համապատասխանէ միեւնոյն աստն երեւան գարուն բաղմաթիւ արարացի էմիրներու Ասորիքի քաղաքներուն մէջ այն ժամանակէն ի վեր որ հոռոմէական իշխանութիւնը սկսաւ հաստատուիլ նոյն եր-կրին մէջ»։ Այն աստն երեւան կու գայ Սա-րակիմասաց անունը։ Ասոնց դէմ պաշտպա-նուելու համար կ'երեւայ թէ Հերովդէս ամ-րացեալ պահակավայրերու գիծ մը կազմա-կերպեց արեւելեան սահմանադիրին վրայ, որոնց կը հրամայէին տեղապահ իշխաններ (ἑπαρχοι)։ Սակայն ասորական բոլոր փոքրիկ թագաւորութիւններն անհետացան։ Տրայիա-նոս ձուլեց նաեւ նաբատական թագաւորու-թիւնն եւ անկէ կազմեց Արարիա նահանգը։ Պետութիւնն ալ իւր կողմէն բերդերու շարք մը կառուցեց՝ իւր տիրապետութեան սահման-ները նշանակելով։ Այս դրութիւնը, որուն իմաստուն ու խոհեմ տրամադրութիւնը կը ցուցնեն արգի մնացած նշխարները, կրնար բաւել այս երկրին անդորրութիւնը պահելու-այս կողմանէ Արարիա նշանաւոր նմանու-թիւններ ունէր Ափրիկէի հետ։ Բայց ճշմա-րիտ դժուարութիւններն այս կէտին մէջ չէին։ Հոռոմայեցոց փառասէր քաղաքակա-նութիւնն էր որ ինքնին աւելի պիտի գրգռէր Արարացոց ժառանգական աւարառու յա-վըշտակութեան բնազդը։

Միջազեռք ազգերու միւսէն մըն էր ջրարբի ցանցառ մասերուն մէջ ծնած էին քաղաքներ, ուր կ'ապրէին յոյն, հրեայ, ա-սորի, բարելացի եւն վաճառականներ։ Արա-րացիք այն տեղեր չէին բնակիր եւ հազիւ թէ կ'երեւային ալ. բայց իրենց էին ընդարձակ տարածութիւններ, ինչպիսի անոնք՝ գորոնք իրբեւ ակնատես (de visu) կը նկարագրէ Ամփիանոս Մարկեղոս ¹¹⁵, մղոններ ու մղոն-ներ «հարթ հաւասար ու երաշտին երկիր մը, ուր խմելու բան մը չի գտնուիր՝ բայց եթէ աղտաղտին ու ժանդահոտ ջուր մը, եւ ու-տելու՝ բայց միայն դասն խոտեղէններ, ուր ուրիշ սնունդ չի կրնար հայթայթուիլ, ան

գի անոնց գաղթականութիւնները կանոնաւորեն»։ Ան-ժրխտելի են այս թափանցումն, երկրագործական կեանքի այս անցումը. միայն կը վախնամ թէ Դիւսոյ ասոր թուական կարեւորութիւնը ստուարացուցած չէւայ։
¹¹⁵ Ամ. Մարկեղ. Ին, 8, 6:

ալ քիչ առողջարար, բայց եթէ ուղտեր եւ ուրիշ գրաստներ մորթելով»։

Եփրատի անդիէն մտնելով այս հարթա-վայրերը՝ հոռոմայեցի բանակները բռնացան տիրեցին ո՛չ այնչափ պարթեւական երկրի որչափ արարական հողի վրայ։ Բայց այս տեղ զիւրին չէր գործադրել Պետրայի պե-տութեան մասին ընդունուած լուծումը։ Մի-ջազեռք որչափ ալ անսպասելի ամուլ ըլլար՝ չէր ներկայացնէր այս անանցանելի անա-պատը, որ կը սկսէր Մեռեալ ծովու արեւե-լակողմը հարիւրերորդ մղոնէն սկսեալ։ Դժբախտարար Արշակունիք ստիպուած էին զիմադրել հոռոմէական արշաւանաց։ Տեղե-րու բնութեամբն իսկ իրականորէն մեծ ինքնօրէնութիւն վայելելով՝ Արարացիք չէին կրնար չէզոք մնալ երկու հակառակորդնե-րուն մէջտեղ եւ ո՛չ ալ վերջնականապէս միանալ անոնցմէ մէկուն շահերուն ¹¹⁶։ Ուստի աշխարհագրական եւ պատմական հանգամանքներն ամէնէն աւելի հանդանա-կած են կաղմելու ցեղային նկարագիրն այս «մլասակար ազգին» (natio pernicisiosa), ինչպէս կ'անուանէ Ամփիանոս, որ կենդանի գծերով նկարագրած է զասոնք ¹¹⁷։ Կիսա-մերկ մարդիկնէր են, կ'ըսէ, գունաւոր տա-ւատով մը կը պատէր զիրենք մինչեւ մէջըը՝ ամէն տեղ կը դիմէին՝ ըլլա՛յ խաղաղութեան աստն ըլլա՛յ պատերազմի՝ հեծած իրենց սրարշաւ ճիւղերու կամ իրենց վախ ուղտերու վրայ. ոչ ոք կառք մը կը վարէ, եւ ոչ ծառեր կը տնկէ կամ արտեր կը մշակէ։ Մշտատե-կը թափառին ընդարձակ անջրպետներու մէջ, սուանց երդի, առանց հաստատուն օրինաց՝ իրենց կեանքը միշտ փախստեայ է (vita est illis semper in fuga)։ Իրենց վարձկան կա-նայք, յաճախ ժամանակաւոր ամուսնացած, այստեղ կը կարգուին, այն տեղ կը ծնանին, եւ ուրիշ տեղ մ'ալ իրենց զաւակները կը սնուցանեն։ Կ'ապրին որսով, կաթով, խո-տեղէններով եւ որսացած թռչուններով։

¹¹⁶ Ամ. Մարկ. ԺԳ, 4, 1. Saraceni... nec amici nobis umquam nec hostes optandi (Մարա-կիստներն երբեք ցանկալի չեն ո՛չ բարեկամ մեզի եւ ո՛չ թշնամի)։ Նոյնպէս կ'ըսէ Թէոփիլակոսոս Միմո-կատոս (Գ, 17, 7) «Մարակիսոսաց նենգաւոր ազգի սովորութիւն ունի երկու կողմերուն մէկէն միւսին անցնիլ. ո՛չ հաստատամտութիւն կայ եւ ոչ պատուա-ւորութիւն»։
¹¹⁷ Ամ. Մարկեղ. ԺԴ, անդ։

բայց ցորեն ու գինի իրենց քով ընդհանրա-պէս չեն գործածուիր ¹¹⁸։

Այս ցեղին մարտիկներուն պատկերը ներկայացուած կը գտնենք Շապուրի խորա-քանդակներուն միոյն վրայ, որ՝ Փլանտէնի տուած շատ բանաւոր մեկնութեան համե-մատ ¹¹⁹, Շապուր Ա. արքայի Վաղերիանու վրայ կատարած յաղթութեանց հետ կապ ունի։ Հոն կը տեսնենք ուղտեր, որոնց կ'ընկերանան բաղմաթիւ բարձրահասակ մարդիկ, որոշ սեմական նկարագրով, կրե-լով զլիւսոյ ծածկոյթ մը՝ որուն նիւթն անորոշ է, կիսազնդաձեւ գտակի ձեւով, որուն ներ-քեւէն կ'անցնի ծոճրակապան մը ¹²⁰։ Կրնանք մասամբ օգտուիլ նաեւ Ասորիքի կուսակա-լին՝ Մ. Եմիլիոս Սկալրոսի դրամներէն Ա. դարուն Ն. Բ.։ Ասոնց մէկ մասը կը յի-շատակէ Արեթասի՝ Պետրայի նաբատեան արքային հպատակութիւնը։ Ծունկի վրայ է, աղաչանաց կերպարանօք, ուղտի մը փո-ղպիով պախուցէն բռնած։ Ուղտը՝ դրամ-ներուն պէսպիսութեանց համաձայն՝ կամ թամբ մը կը կրէ կամ այն բարձրակառոյց թամբը, ուստի Արարացիք շատ բարձրէն կ'արձակէին իրենց նետերը ¹²¹։

Սասանեանց գահակալութիւնը, որոնք աւելի յանդուգն ու աւելի յարատեւող էին քան թէ պարթեւ արքաները, պէտք է կար-ծել թէ այն արդիւնքն ունեցաւ որ Վրանա-բնակներն աւելի խիզախեցան, որովհետեւ իրենց աւարառութեանց առիթները շատցան։ Նոյնպէս կ'երեւայ թէ այն աստն հարաւի ցե-ղերը հոռոմէական հողի վրայ նոր գաղթակա-նութիւն մը սկսած ըլլան՝ շնորհիւ վարչա-կան այն խառնաշփոթութեան, որ Գ. դարու մասնակէն ի վեր՝ «ներդրամիտ զիջողութեան մը հետեւանօք, զոր թերեւս պարագաները կը թելադրէին, կը տեսնենք որ նախ կ'ըզեա-

¹¹⁸ Դարձեալ կը համեմատէ զասոնք յափշտակիչ զարմուռն հետ, եւ կը յաւելու թէ աւելի ընդար-ձակ խոսած է անոնց բարուց մասին իւր այն հոգեբան մէջ՝ որոնք Մարկոսի Աւրելիանոսի նուր-բանքն էին, եւ որոնք այսօր կ'ըսուած են։
¹¹⁹ Flandin et Coste, Perse ancienne, pl. LI D.
¹²⁰ Եթէ այս ծոճրակապան կարծուածը հերաց ըլլա՛ն, զոր հին աստն Արարացիք կը թողուն իր անձի։ Պղինիոս, Բն. Պատմ. 2, 162... intonso barba abraditur praeter quam in superiore (Հերը խուզելով, մօրուքը կ'ածիլուէր՝ ի բայ վերին շուրթին վրայ)։
¹²¹ Ապպիանոս, Ասոր. 32. Borghesi, Livres, II, p. 185; E. Babelon, Les Monnaies de la République romaine, Paris I (1885), p. 119—121.

ցեալ քանի մը ցեղեր կը հաստատուին պա-հականոցներու դժէն ներս, գլխաւորաբար Բոսորայի եւ Դամասկոսի բաժնին մէջ։ Այս ցեղերն իրենց գլուխ ունէին իրենց ազգային շէյխերը, որոնք հոռոմէական վարչութեանն նոյն իշխանութիւնը կ'առնուին, քիչ շատ այնպէս՝ ինչպէս էին բերբերական Ափրիկէի մէջ մաւրիտանացի իշխանները. վարչակա-նօրէն ասոնց «ցեղապետ» (φύλαρχος, phy-larchus) տիտղոսը կը արուէր ¹²²։ Կամաց կամաց բաղմացան արարական այս միջնա-կամաց վիճակները, այն աստն զասոնք զի-վակ վիճակները, այն աստն զասոնք զի-նոտորէն կազմակերպեցին, եւ նահանգնե-րու համեմատ բաժնեցին. ժամանակ մը ըրու հաղապետներ Պաղեստինի եւ Արա-կային ցեղապետներ Պաղեստինի եւ Արա-կային ¹²³։ Սակայն ուրիշները՝ որ շատ աւելի բաղմաթիւ էին, սահմանադրուիններէն դուրս մնացին, «պատերազմաց աւարաց պատրաս-տական» (ad furta bellarum adpo-siti)՝ ինչպէս կը բացատրէ Ամփիանոս, եւ որոնք իրենք զիրենք աւելի տուողին վար-ձու կը վաճառէին։ Պարսից Շապուհ ար-քայն մեծ դժուարութիւններէ ետքը՝ զանոնք իրեն կողմ ձգած էր. Կոստանդինոս յաջողե-ցաւ զանոնք անկէ խլել ¹²⁴, իսկ Յուլիանոսի իրենք ինքնին առաջարկեցին սատարել, որ եւ ընդունուեցաւ ¹²⁵։

Արարական հզօր տէրութիւն մը կազ-մուած էր, մայրաքաղաք ունենալով Հիրա՝ հին Բաբելոնի հարաւակողմը, միակ ընտա-նիքի օգտին։ Կը ճանչնար Պարսից գերիշ-խանութիւնը, բայց այս ձեռնարկու ստորա-կարգեալները կը միջամտէին Ժրբեմն նոյն իսկ Երանեան պետութեան ներքին գործոց։

¹²² Արդէն Մարտոն (ԺԶ, 2, 10, էջ 753 C) կը յիշէ վրանաբնակաց ցեղապետները՝ Ա. դարուն. բայց այս տիտղոսն շատ աւելի անազանազոյն արձանագրու-այս տիտղոսն մէջ նորէն երեւան կու դայ։ Յայտնի է թէ թեանց մէջ նորէն երեւան կու դայ։ Յայտնի է թէ միջանկեալ ժամանակի մէջ ալ գործածական մնաց եւ կամ համազօր բառ մը կը գործածուէր։ Այսպէս մէկն իր Մոյետոս Մալաքոս (Soaidos Malachos) «արտու-էր Մոյետոս Մալաքոս» (εθθαληγος νομαδω), զոր կը յի-կանայ զօրավարը (Waddington, Inscr. de Syrie, 2196), անտարակոյս Արարա-տոն կայսեր ժամանակէն։ Չինուորական այս տիտ-ղոսը կայսեր ժամանակէն հետ մտածելու թէ զոսը չ'արգելուր վաղեմաբնի հետ մտածելու թէ իրականին այս վաչկատուն արտականները (νομαδες) կարեւորներ էին կամ իրենց հաշուին եւ կամ ա-խաշարածներ էին շատ մօտ հաստատուած երկրագործնե-նապատին ոչ շատ մօտ հաստատուած երկրագործնե-րուն հաշուին. համա. 2112, 2203, 2512:
¹²³ L. Duchesne, Mélanges de Rome, XVI (1896), p. 113 = Autonomies ecclésiastiques, Églises séparées, Paris 1896 (Բ. Տղ. 1905), էջ 336 եւն։
¹²⁴ Հմմտ. Յուլիանոս, ձառ Ա, 21 B. «... բու-պատգամագնացութիւնները դարձած ըլլալով թշնա-մեայ, արար աւազակաց դէմ»։
¹²⁵ Ամ. Մարկեղ. ԻԳ, 3, 8, 5, 1: — Rawlin-son, History of Persia, London 1876, p. 146:

խոյս տուին¹⁴⁶։ Յարթութենէ մ'ետքն ասոնց պետք վախնալով թէ Հոմայեցիք չառնուն իրենց ձեռք ձգած աւարները, իւր զօրքերով կը թողու հասարակաց բանակետողը եւ մօտ տեղ մը կը մեկուսանայ¹⁴⁷։ Սակայն պիտի տեսնենք, որ աւարառութեան եւ անկարգապահութեան ողին ժամանակին զօրաց մէջ սովորական թերութիւն մըն էր. միայն թէ Արաբացիք բարձրագոյն աստիճանի մը կը հասցընէին նոյնը, ա՛յս է ամէնը։ Հոմայեցի զօրավարներն անխորհուրդ էին դանոնք իրենց բանակներուն մէջ մուծանելով¹⁴⁸. աւելի լաւ էր անոնց յանձնել առանձին յատուկ պաշտօն մը, ինչպիսի էր այն՝ զոր Մասուդի պատմագրին համաձայն՝ Հերակղ կայսերմէ ստացաւ Ուկայիդեր (Ocaidir) իշխանը, որ հրաման առած էր Մեդիանայի կարաւանները ներել¹⁴⁹։ Որչափ ալ Արաբացիք լաւ յարաբերութիւններ ունէին միայնակեցաց հետ, սակայն կը կողոպտէին վանքերը, եւ Ս. Սարայի վարքէն կը ճանչնանք Կ. Պոլսոյ վարչութեան ուղղուած խնդրագիր մը՝ ամուր դղեակ մը կառուցանելու անպատին մէջ, մենաստանները պաշտպանելու համար՝ Սարակինոսաց յարձակմանց դէմ (δία τὴν τῶν Σαρακηῶν ἐπιδρομῆν)¹⁵⁰.

Անտարակոյս Պարսկաստանի հպատակ Սարակինոսներն ալ ամենեւին տարբերութիւն չունէին քրիստոնեայ ազգակիցներէն։ Անոնք ալ ունէին այն կարեւոր արուեստը վայրկենաբար երեւան գալու այն տեղն ուր իրենց չէր սպասուեր. անբարեկարգ հրոսներ կը կազմէին, ուր կանայք ալ արանց կը խոսնուէին եւ անոնց պէս քաջաբար կը կռուէին¹⁵¹։ Մէջերնէն ոմանք զրահ մը զգեցած էին, որ թոյլ կու տար իրենց նիզակով ի մերձուստ կռուելու. ուրիշներն աղեղնա-

ճիգ կ'ըլլային։ Անհմուտ էին քաղաքապաշարման արուեստին. Դամասկոսի պաշարումը տեւեց վեց ամիս¹⁵²։

Բիւզանդացոց զինուորական ստորադասութիւնը չէր որ Ասորիքի ճակատագիրը վճռեց։ Նախ դրամի պարզ խնդիր մըն էր. եղոմէի անապատին պահպանութիւնը յանձնուած էր Սարակինոսաց՝ դրամական նպատակի մը փոխարէն, զոր սակայն շուտով դադրեցան անոնց հատուցանելէ¹⁵³։ Վարձկան զինուորներն երբ իրենց բողոքը կը ներկայացընէին կայսերական գանձապահին, փոխարէնը թշնամանքս կը լսէին՝ «Մեր ինքնակալը հազիւ կը դռնէ իւր զինուորաց վճարելու. բան մը չունի չնեքուն տալու»։ Այն ատեն քրիստոնեայ Սարակինոսները պարզ հանդիսատես մնացին. նոյն իսկ շատերը միացան մահմետականաց հետ, որոնց պետք բարեբաստիկ գաղափարն ունեցած էր արգիլելու իւր մարդկան անօրուտ կոտորածներն ու աւերումները։ Այսպէսով բնիկներուն զորձակցութիւնը ստացաւ, որ շատ թանկագին էր՝ իւր պաշարը հայթայթելու համար¹⁵⁴։

Աւելցնենք թէ արիւնակցութեան գաղափարը, որ հիմն էր ցեղին, երթալով կ'ընդարձակուէր. երկայն ժամանակ իրարու կապած էր միայն ընտանիքի մ'անդամները. բայց քիչ մ'ետքը պիտի համախմբէր՝ Մահմետի կոչին վրայ՝ դրեթէ ամբողջ ազգը¹⁵⁵։ Սակայն չեմ կրնար այս գաղափարն ընդարձակորէն պարզել՝ առանց մեր նիւթէն չեղելու։

§ 4. Հիւսիսի տիրապետողները։

Այն ազգերուն քով, որոնք անվերջ պայքարներու ենթակայ երկիրները կը բնակէին, պատշաճ է որ նշանակենք զանոնք ալ, որոնք այլեւայլ ժամանակներ դրսէն այն տեղերը ներս խուժեցին հրոսելով, եւ այնպէս զարհուրեցուցին երկու ռիւբրիկները, մինչեւ՝ այս նոր վտանգին դէմ՝ մէջերնին վաղանցուկ միութիւն մը կազմեցին։ Առաջին գծին մէջ կ'անուանեմ Ալանները¹⁵⁶։ Անոնք բազմաթիւ ցեղեր կը կազմէին, որոնք ամբողջ Հարաւային Ռուսաստանի մէջ կը թափա-

¹⁴⁶ Մազդաւ, էջ 464. Պրոկոպիոս, Գ. Գ. Ա, 18, 36:
¹⁴⁷ Պրոկոպ., Գ. Գ., Բ, 19, 26:
¹⁴⁸ Բելիսար կ'առաջարկէ որ զանոնք թողուն անանձին գործելու, որովհետեւ անտակ են պաշարում մ'ընելու եւ շատ յարմար՝ դաշտօրային աւերելու մէջ (Պրոկոպ., Գ. Գ. Բ, 19, 12): Բայ ատի ո՛չ Բիւզանդացիք եւ ո՛չ Պարսիք կը դիտէին իրենց այս պաշտպաններուն մէջ հաւատարմութեան զգացում գարթուցանելու. Հերակղ կայսրը կապարովկիոյ սահմաններուն մօտ կը հանդիպի արաբացի յառաջապահ զնդի մը եւ կը պարտէ. այս վարձկանագործն հրամանատարն իւր ազատութիւնը կը ստանայ այն պայմանաւ որ իւր մարդիկներով անցնի կայսերական բանակին մէջ (Գէորգ Պրիսիդ., Արշաւ. Պրո., Բ, 225 եւն):
¹⁴⁹ De Goeje, անդ, էջ 12:
¹⁵⁰ Անդ, 72, էջ 343. Հմմտ. 73 եւ 83, էջ 347 եւ 359:
¹⁵¹ De Goeje, անդ, էջ 117:

¹⁵² Անդ, էջ 82:
¹⁵³ Կեղերիտոս, Ա, էջ 751. Թէոփանէս, 325, 23:
¹⁵⁴ De Goeje, էջ 24, 82, 86:
¹⁵⁵ Pernice, անդ, էջ 246:
¹⁵⁶ Հմմտ. Tomaschek, Alani (Պաւլի-Վ.):

ուէին, Կասպից ծովէն մինչեւ Տանայիս, ուր յաջորդած էին Սարմատներու, նախ եւ յառաջ Մազդութք (Μασσαγέθας, Massagetae) անուամբ¹⁵⁷։

Առաջին անգամ Պոմպէոս բախեցաւ Մազդթքաց՝ Միհրդատայ դէմ մղած պատերազմին ժամանակ, եւ վանեց զանոնք դէպ ի Կասպից ծով։ Յետոյ անոնց ընդհարեցաւ Վենտիդիոս՝ Անտոնինոսի նուերակը¹⁵⁸։ Տրբերիոսի օրով ասոնք Հոմայեցոց ծառայութիւն մատուցին. Հոմի շահուն ի նպատակ Վերք եւ Աղուանք աղատ անցք տուին Ալաններու, որոնք եկան այրացաւեր ապականեցին Հայաստանն ու Պարթեւաց երկիրը¹⁵⁹։ Ներոն ասոնց դէմ արշաւանք մը ծրարած էր. յետոյ կրկին եկան աւարելու Մարաստանն ու Հայաստան. Վեսպասիանոս մերժեց օգնել Վաղարշի եւ Հայոց Տրդատ արքայն քիչ մնաց հեղձամահ պիտի ըլլար անոնց միոյն լարածովը (lasso). հազիւ ժամանակ ունեցաւ սրով կտրելու պարանը¹⁶⁰։ Ադրիանոսի վերջին տարիները կը սպառնային նոյն իսկ Կապարովկիոյ. այս ժամանակ դրեց Առիանոս իւր «ճակատամարտութիւն ընդդէմ Ալանաց» (ἐχταξέως αὐτῶν Ἀλανῶν) գիրքը։ Կաւկասը կտրելով կ'անցնէին Դարիալի կրճէն (Կաւկասեան Դրուսիֆ՝ Portae Caucasiae)¹⁶¹, կամ նաեւ Կասպից ծովուն արեւմտեան ծովափէն, ուր թերեւս փնտռելու է Կասպից Դրուսիֆ (Portae Caspiae) Երէց Պղինեայ¹⁶²։

Արեւելագէտներու եւ ազգագիրներու թողլու ենք զանազանել զասոնք Հոններէն, որոնց անունը պատմութեան մէջ աւելի ուշ կ'երեւայ, եւ որոշել այն զանազան ցեղերուն մէջէն՝ որոնք այս վերջին անունը կը կրէին, այսպէս՝ «Հիւսիսի Հոնք, զորոնք Պարսիկք Թուրք կը կոչեն»¹⁶³, Սպիտակ Հոնք կամ

¹⁵⁷ Գոնէ այսպէս կ'ըսէ Ամմիանոս Մարկիդոս (ԻԳ, 5, 16) «ϩαζαγῆται (Massagetae), զոր այժմ Ալանս (Halanos) կոչեմք»։ ԼԱ, 2, 128 «Գլաւանս... հինք՝ Մազդութք...»։ Յամենայն դէպս միւս անունն ասոնց կը տրուի արդէն Ա. դարուն (Լուկան., Փարս., Ը, 133՝ duros aeterni Martis Alanos):
¹⁵⁸ Ամ. Մարկ., ԻԳ, 5, 16:
¹⁵⁹ Յովսէպոս, Տ. Հ., ԺԸ, 97—98:
¹⁶⁰ Նոյն, Գ. Հ., Է, 245—250:
¹⁶¹ Պղինիոս, Բն. Պոմ., 2, 30, 40. «Սարմատալիան Դրուսիֆ» (Σαρματικαὶ Πύλοι) կոչուած Պոպոմիայ քով՝ Ե, 9:
¹⁶² Տես վարը՝ տեղագր. վերջը:
¹⁶³ Թէոփիլ. Սիմոկ., 7, 6, 9:

Հեփթաղք¹⁶⁴, Սարիք կամ Խազարք¹⁶⁵։ Աւելի յատուկ բան մ'ալ չենք գիտեր Costotocae կոչուածներուն մասին¹⁶⁶. եւ այս ամէն մանր աղինք գրեթէ իրարու հետ խոսնուած են Ամ. Մարկիդիանոսի սա միահաղոյն անուանակոչութեամբը Սիլիւթացիք, որուն պարտական ենք անոնց երկրին ու բարուց ընդհանուր նկարագրութիւն մը¹⁶⁷։

Ինչպէս կ'ըսէ՝ Ալանք կամաց կամաց իրենց անունը տուին դրացի ցեղերուն՝ որոնք շատ անգամ յաղթուած էին իրենցմէ, ինչպէս որ Պարսից անունը տարածուեցաւ Երանի բոլոր հարկատուներուն վրայ, եւ նման բան մ'ալ պատահած ըլլայ Հոնաց։ Բարբարոսներու բողոքներուն վրայ, եւ նման բան մ'ալ պատահած ըլլայ Հոնաց։ Բարբարոսներու բողոք այս խմբերը կը բնակէին, կամ մանաւանդ կը շարժէին, գլխաւորաբար Կասպից ծովուն արեւելքն ու արեւմուտքը¹⁶⁸։ Հոնք, կ'ըսէ Ամմիանոս, անուր գազանաբարոյութիւն մ'ունին եւ իրենց մէջ գազանական բան մը կայ։ Կարծես իրենց ճիւղերուն վրայ բեւեռուած կ'ապրին, որոնց թիկանց վրայ կը դրաղին իրենց ամէն գործերովը։ Իրենց պետերը թագաւորի տիտղոս չեն կրեր։ Թեթեւութեամբ ըլլալով՝ միայն հրոսակամարտը (guerilla) գիտեն. քաջ նետաձիգ պղնձաւորներ, եւ եւ կը գործածեն այնպիսի փրկներ՝ որոնց ծայրը շատ նրբաւարտ ոսկր աղուցուած է. բայց մօտէն ալ կը կռուին սրով եւ գալարուն փոկերով կը ջանան իրենց թշնամիները շողապատել¹⁶⁹։ Կը սնանին

¹⁶⁴ Հմմտ. E. d. Drouin, Mémoire sur les Huns Ephthalites, dans leurs rapports avec les rois perses Sassanides (t. Muséon, XIV, 1895, p. 73—84, 141—161, 232—247, 277—288). Պրոկոպիոս (Գ. Գ., Ա, 3, 4—5) այս մասին կ'ըսէ. «Միայնամբ Հոնաց անուամբ կը հասկըցուին ասոնք, որովհետեւ սպիտակադէմ են եւ առանց տձեւութեան, դազանական տակադէմ են եւ առանց միայն սուր պատկանի կ'ընեն, այլ մանաւանդ դէպք կ'աւանու իրենց սահմանադրուելու պաշտպանելու համար։ Միտակասման հետեւ ժողովուրդները կ'անուանուին Հոնաց վրայ տական տէրութիւն մ'ունին, հիմնուած օրինաց վրայ եւ արքարութիւնը կը պահեն դաշտան մէջ՝ եթէ՛ իրենց մէջ եւ եթէ՛ օտարներուն հետ»։ Այս նպատակով կ'առաջարկուին անկէ յառաջ կու դայ որ անոնք իրենց միայն յարձակելով, մինչեւ Բիւզանդացիք աւելի նուազ ենթակայ էին անոնց աւերմանը։
¹⁶⁵ Tomaschek, Chazaroi (t. Պաւլի-Վ.):
¹⁶⁶ Ամ. Մարկիդ., ԻԲ, 8, 42:
¹⁶⁷ Անդ, Յաւել., ԼԱ, 2:
¹⁶⁸ Հոններն այս ծովեզերացու վրայ յաջորդած են Գաւաղ (Dahae) կամ Դապա (Daai, Հմմտ. Tomaschek՝ նոյն անունները տը Պաւլի-Վ.) որ նոյն աշխարհները կը բնակէին եւ շատ յաջողակ հեծեալ աղեղնաւորներ էին, որոնց քով Անտիոքոս Գ. օգնականներ գտած էր Հոմայեցոց դէմ (Պոպիլ. Ե, 79):
¹⁶⁹ Յանդգոտական ըլլալու պէս նկարագրութեան մէջ գտնել այն լարածովը (lasso)՝ զոր Մեքսիկացիք կը գործածէին։

իրենց անդէնց կաթով եւ որսացած երէններով. չեն գիտեր մշակութիւն, որ զիրենք հողին պիտի կապէր, եւ անդադար կը տեղափոխուին, կանայքն ու տղաքը փոխադրելով սայլերով, որոնք կեղեւներով ծածկուած են եւ ուր իրենք ալ գիշերները կ'անցնեն: Կը բանակին ճամբուն վրայ հանդիպած մարգազեախներուն վրայ, իրենց անդրուվարները բոլորակաձեւ կը շարեն, պտղաբեր ծառերը կը քաղեն ու յետոյ կը մեկնին՝ իրենց առջեւէն վարելով պաճարն ու դուարը: Ամէն բանէ աւելի պատերազմը կը սիրեն ու ձիավարութիւնը. երիտասարդներն՝ որոնք մանկութենէ վարժած են հեծնել, իրենց անարգանք կը համարին ոտքով քալելը: Եթէ Ամիւսնու հաւատանք, Ալանք քիչ մ'աւելի քաղաքակրթուած էին. աւելի նուազ անագորոյն, աւելի լաւ հագած, բայց միւս բաներով շատ նման Հոնաց: Թեթեւազն ու զիւրաշարժ, քաջ որսորդներ ու աւարառուներ: Պատերազմասէր էին շատ, եւ իրենց սպաննած թնամիներուն մորթը հանելով անով իրենց ձիերը կը սթարէին: Ամէնքն ալ ի ծնէ աղատ են¹⁷⁰:

Կասպից Դրանց՝ ինչպէս նաեւ անդրկասպեան աշխարհարածին պաշտպանութեան մէջ միայն Պարսք շահ ունէին եւ պէտք էին խնամ տանիլ. ընդհակառակն ամէն հրոսական արշաւանք որ Կաւկասի կենդրոնէն կ'անցնէր՝ կը սպառնար երկու պետութեանց ալ: Ասով կը մեկնուի այն դաշինքը՝ զոր կը պատմէ կեղծ Յեսու Սիւնակեաց¹⁷¹. այսինքն թէ Պատերազմի մը պարագային Հռոմայեցիք եւ Պարսք իրարու պիտի օգնէին փոխադարձաբար զէնքով ու արծաթով: Նաեւ առաջիններն ասկէ օգուտ կը քաղէին, որովհետեւ Հոնք Ասորիքի մէջ փնտնէր հացուցին Արկադիոսի եւ Անտրիոսի օրով: Բայց մանաւանդ Պարսիկներն այս դաշանց վրայ անդադար կը յենուին. Չենոնէն ոսկի առին փրկանաւորելու համար Պերոյ գորավարն՝ զոր Հոնքը գերած էին: Այն առեւն փորձեցին դաշնադրութիւնը խեղաթիւրել եւ անկէ հետեւցընել թէ Կ. Պոլսոյ ինքնակալները տա-

¹⁷⁰ Այս պատկերի մէջ տարակուսական գծեր կան, ստանց հաշուելու աւելարանութիւնները: Ամիւսնու կ'ըսէ թէ Ալանաց քով երանելի է որ ճակատի մը մէջ կ'իյնայ, եւ վաս՝ որ ծերութեամբ կամ արկածով մը կը մեռնի: Արդ նայն կանխակալ կարծիքը կը վերադրէ նաեւ Պարթևներուն (ԻԳ, 6, 44):
¹⁷¹ Ժամանակագր., 9—11: Ըստ Թէոփանէսի (տես վարը) դաշինքն թէպէտ Կրասերի ժամանակէն էր:

րեկան ճշմարիտ հարկ մը վճարելու պարտական են¹⁷²: Կաւատ 496ին վայրասպար դրամ պահանջեց Անաստասէ, որ միայն փոխատուութեան մը կ'ուզէր հաւանիլ¹⁷³: Ասոր հետեւութիւնը պատերազմ մ'եղաւ: Յետոյ խաղաղութիւն առաջարկեց Յուստինիանու այն պայմանաւ որ վերջինս արծաթ հանգանակէ պահպանելու համար Կասպից Դրոնքն ընդդէմ նոյն Մաղթթաց¹⁷⁴: Բայց իրականութեան մէջ ո'չ մէկ եւ ո'չ միւս կողմը խնդիրն այս իմաստով կը նկատէր. ա'յնչպիսիքն մտածեր միասին զգուշութեամբ անձնապահ ըլլալ այն բարբարոս ազգերէն՝ որչափ դանոնք իրարու վրայ կամ հակառակորդին դէմ ձգել գրգռելով. Կաւատ Հեփթաղներ ունէր իւր բանակին մէջ. Խոսրով յետոյ դասոնք բնաջինջ ըրաւ օգնութեամբ Թուրքերու՝ որոնք ժամանակաւորապէս հարկ կը վճարէր¹⁷⁵: Իսկ Ալանաց մասին՝ զորոնք պիտի ընկրկէին, Հոսմայեցիք դանոնք իրենց զօրաց մէջ մուծին¹⁷⁶. Եւ զբամական նպաստներու ուժով զեղծուցին հրապուրեցին Պարսից հին ստորակարգեալները՝ Սարբրական Հոնքը, որոնք սակայն քիչ ապահով եւ անկարգապահ ցեղ մըն էին¹⁷⁷:

Մեր գործը չէ այս խառնակ ու տխուր պատմութեան մանրամասնութեանց հետեւիլ. ասի հաղիւ թէ մանրալիպական թեթեւ օգուտ մը կ'ուեննար՝ եթէ չնպաստէր պայծառօրէն երեւան հանելու երկու մեծ պետութեանց իրենց վախճանին մօտ գործածած քաղաքականութիւնը: Իրենք զիրենք կը փճացընէին ստանալու համար օգնութիւնն ազգի մը՝ ուրիշ ազգի մը դէմ, որուն վրայ յետոյ՝ իւր տոյժը հանելու համար՝ ահագին տուգանքներ կը դնէին:

(Շարունակելի:) Լ. Յ. ՏԱՇԵԱՆ

¹⁷² Ի՞նչ չափով իրաւացի էր այս պահանջումը: Հաղիւ թէ կարելի ըլլայ բոկ: Կ'երեւայ թէ Նէօլեքէ (Տարբրի, էջ 108, ծն. 2) կ'ընդունի անոնց երաւունք ունենալը. Յեսուայ Սիւնակեցի գործածած բացատրութենէն կը տեսնուի որ խնդիրն արդէն վիճելի էր եւր ժամանակը:
¹⁷³ Յեսու, 23: Թէոփանէս, Ժամանակագրական, էջ 144, 21 եւն:
¹⁷⁴ Պրոկոպիոս, Պ. Պ., Ա, 16, 4—8:
¹⁷⁵ Թէոփանէս, Սիմոն, Գ, 6, 11:
¹⁷⁶ Չոսիմոս, Գ, 35, 2: Պակատ, Երբորդեան, 32: «Տեղեկութիւնք Աստիճ. Արեւմ., 2, 31. comites Alani:
¹⁷⁷ Ալաթիաս, Գ, 3, 3:

ՆԵՓՈՒՄ Ա. ԹՈՒԳՈՒՈՐԻ ՄՈՒՅՈՒՆ ՏԱՐԻՆ (1269, : Ո Կ Տ. 29)

Ճշգրտելու կը կարօտի Հեթում Ա. Մեծ թագաւորի մահուան տարին, զոր Հ. Ղ. Ալիւան կը նշանակէ 28 հոկտ. 1270¹: Գննելու համար այս հարցը նկատի պիտի առնեմ 1266—1271 տարիներու ժամանակագրութիւնը, վկայութեան կոչելով ժամանակակից աղբիւրները:

1. «ՉԺԵ. Սմլմօթն² զօրօք անօրինաց կոտորեաց. զզօրս Հայոց ի Մառի եւ կալաւորսն թագաւորին զԼեւոն եւ Եսպան զԹորոն զմիւս որդին. եւ գերեաց եւ այրեաց զՀայք մինչեւ ի Բարձրբերդն եւ յԱտանա. զՍիս այրեցին եւ զաւագ եկեղեցին. եւ բացին թագաւորաց եւ զիշխանաց զոսկերսն հանեալ այրեցին հրով եւ հոսեցին, հողմով³»:

2. «Յայսմ ամի... որ թվ. ՉձԺԵ էր, երեկ Մարցին ի Հայոց երկիրն ու տարաւ զայս գիրքս ծառայ. ես վարդան յերուսաղէմ կու երթայի. հանդիպեցաւ այս գիրքս ինձ ի յԱքայ. ես զնեցի ինձ յիշատակ եւ ծնաւազայ իմոց. եւ որ յիշէ յիշեալ լիցի ի Բրիտոսս. ամէն⁴»:

3. «Գրեցաւ սուրբ Աւետարանս... ի թուականութեանս Հայոց ՉԺԶ. յայս նշանաւոր եւ ի վշտալից ամիս, յորում ելին անօրէն զօրքն Իսմայելացոց եւ մտին յաշխարհս Կիւլիկեցոց. իսկ ելեալ զօրաց մերոց ընդդէմ նոցա՝ ոչ կարացեալ ընդդէմ կալ վասն սակաւութեանն՝ ի պարտութիւն մատնեցան. եւ զերկուս որդիս թագաւորին՝ զԻնն սրախոխ արարին եւ զմիւսն զԵրի վալեցին յԵգիպտոս. եւ մտեալ նոցա այնուհետեւ (ի) բազում գաւառս եւ քաղաքս եւ

¹ Սիսուան, էջ 154, 555: Այսպէս ալ ընդունուած է նորագոյններէն. հմտ. Fr. Tournebize, Histoire politique et religieuse de l'Arménie, Paris էջ 214:
² Կ'անհնարիէ 'Izz-eddin Igan ամիրան, մտաւորական Տեմուր-Սեմ-էլ-մաւ, «Թոյն մահացու». Makrizi, Histoire des sultans mamlouks, trad. Ét. Quatremère, t. I, 2e part., p. 2 եւ 146: հմտ. Սիսուան, 400—402:
³ Հեթում պատմիչ թաթարաց, վեներտիկ 1842, էջ 84 եւ վիեննա, Թ. 844, թղ. 205ր: Հնագոյն օրէնքի Արտաւազդ Արքեպ., Կարապետ 0չին թագաւորի ձեռագիր ժամագիրքին (1319էն) Անթիլիաս, 1933, էջ 99, ունի. «Սմլմօթն զարբաւք անարկուց կոտորեաց զզօրս Հայոց ի Մառի եւ կալաւորսն զԹորոն զմիւս որդին Հայոց զպարսն Լեւոն եւ Եսպան զմիւս որդիս զպարսն Թորոն. եւ եմուտ յերկիրն Հայոց. իրենց եւ այրեաց մինչեւ ի Բարձրբերդ եւ յԱտանա»:
⁴ Վիեննա, Թ. 833, թղ. 208ա (Աւետարան յամէ 1235):

գեօղս եւ վանորայս եւ եկեղեցիս հրճիւք արարին. եւ անթիւ քրիստոնէսայս սրոյ եւ հրոյ մատնեցին եւ երիս բիւրս եւ վեց հազար գերիս տարան յաշխարհն իւրեանց. իսկ զանանոց եւ զլնչից ո՞ կարացէ պատմել: Չորս յանմխիթար սուգ կանք եկեղեցիք քրիստոնէից եւ ողբամք զողբս Երեմիա մարգարէի որ ի վերայ Սիոնի...⁵»:

4. Դէպքս մանր կը պատմէ Գրիգոր Ակնեցի⁶. «Թագաւորն Հայոց՝ իբրեւ զիտաց զգալ Թուրքին ի վերայ երկրի իւրոյ, յայնժամ ժողովեաց զզօրս իւր եւ ետ ի ձեռս թագաժառանգ որդւոց իւրոց պարոն Լեւոնի եւ Թորոսին: Եւ ինքն դնաց սակաւ մի զօրօք առ Տաթարն, որ կայր իջեալ ի մէջ Արլստանին եւ Կոկսոնոյ. եւ անդ յամեալ աւուրս ինչ՝ ոչ գիտելով գերկպառակութիւն զօրաց իւրոց. եւ մինչ հոգաց առ զլիւսաւորս Տաթարին գալ եւ օգնել զօրաց նորա եւ ինքն երեկ երկու աւուրք յառաջ. ապա լսեաց զգալն Թուրքին եւ զբեկուսն զօրացն երկմտից, որ ետուն զթագաժառանգ որդիսն իւր ի ձեռս անօրէն զայլոցն եւ ինքեանք փախեան ի ձեռս անօրէն զայլոցն եւ ինքեանք փախեան զաւուրս ինչ՝ ոչ գիտելով գերկպառակութիւն զպարոն Թորոս ի պատերազմին սրախողիտոյ արարին յիւրում երեվարին եւ զպարոն Լեւոն ըմբռնեալ բազում զօրօք Թուրքացն եւ տարան ծառայ ի Մարք»:

Կիլիկիոյ Պատմիչը⁷ դէպքս պատահած կը նշանակէ 1266 օգոստոս 23, երկուշաբթի. արտաքին պատմիչները⁸ օրը կը դնեն 24 օգոստոս:

5. Թշնամին ասպատակեց Կիլիկիա 20 օր⁹, ուստի օգ. 23—սեպտեմբեր 12: Հետեւ երբ լսեց հայ բանակին պարտութիւնը, Թորոսի նահատակութիւնն եւ Լեւոնի գերութիւնը, «րեկաւ սիրան ի կարի եւ յանհնարին տրամութեանէ... մինչ եկն ի սուրբ եւ ի գերահռչակ ուխտն միանձանց ի յԱկանց անարատս. եւ աստ միթարեալ սակաւ մի ի միեղէն եղբարց սուրբ ուխտիս՝ կեցեալ աւուրս ինչ մինչ ելաւ Թուրքն յերկրէս¹⁰»:

⁵ Կոր-Չուրայ, Թ. 51 Ամենափրկիչի (Տէր-Աւետիսեան, Յուլյակ):
⁶ Մարգարայ արեղայի Պատմութիւն վասն ազգին Նետոյաց, Պետերբուրգ 1870, էջ 39—40: Եւսնը՝ Պատմութիւն թաթարաց վարդանայ պատմիչի. Երուսաղէմ 1870: Գրուածքիս հեղինակն է Գրիգոր Ակնեցի. այս մասին ընդարձակ պիտի խօսիմ այլուր:
⁷ Սիսուան, էջ 401:
⁸ Հմտ. Tournebize, անդ, 213, ծան. 2 եւ R. Grousset, Histoire des Croisades, III, p. 634—635:
⁹ Grousset, անդ:
¹⁰ Գր. Ակնեցի, անդ, էջ 40: